



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«24» օգոստոս 2022թ.


**Հ Ր Ա Մ Ա Ն N 146-ՉԿ**

**ՄԻԼԵՆԱ ԳԱԳԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով և 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N<sup>o</sup> 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Միլենա Կարապետյանի 24.08.2022թ. դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի իրավաբանական վարչության պետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Ղ4-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 24.08.2022թ. անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .**

1. Միլենա Գագիկի Կարապետյանին նշանակել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության պետ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Ղ4-1):
2. Միլենա Գագիկի Կարապետյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 341 943,8 դրամ (երեք հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քառասուներեք դրամ ութ լումա)՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

 Recoverable Signature

**X** 

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ